

Հավելված
ՀՀ պաշտպանության նախարարի
2023 թվականի 06. 26 -ի
N 877/հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԱՐԵԼՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը <Պաշտպանության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և <Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 657-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. նոյեմբերի 08-ի N 1269-Ն որոշման 9-րդ կետի պահանջների համաձայն սահմանում է Հանրապետական զինվորական կոմիսարիատում (այսուհետ՝ Զինվորական կոմիսարիատ) և ենթակա տարածքային ստորաբաժանումներում (այսուհետ՝ Տարածքային զինվորական կոմիսարիատ) Հայաստանի Հանրապետության նախազորակոչային և զորակոչային տարիքի, ինչպես նաև պահեստազորում հաշվառման ենթակա քաղաքացիների զինվորական հաշվառումը վարելու կարգը (այսուհետ՝ Կարգ):

2. Զինվորական հաշվառումը վարելու կարգի սահմանման նպատակն է.

1) Հայաստանի Հանրապետության նախազորակոչային և զորակոչային տարիքի, ինչպես նաև պահեստազորում հաշվառման ենթակա քաղաքացիների զինվորական հաշվառման վարման լրիվության և միասնականության ապահովումը,

2) Զինվորական կոմիսարիատում և Տարածքային զինվորական կոմիսարիատներում նախազորակոչային և զորակոչային տարիքի, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիների քանակական և որակական կազմի որոշումը, զորակոչային և զորահավաքային ռեսուրսների արդյունավետ կառավարումը և զինվորական հաշվառման աշխատանքների պլանավորման ու անցկացման կանոնակարգումը,

3) զինվորական հաշվառման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ծանուցագրերի, հաշվառման գրքերի, մատյանների, անձնական գործերի, քարտերի, անվանացուցակների, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ձևերն ու դրանք լրացնելու, վարելու և պահպանելու կարգերը սահմանելը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

ԳԼՈՒԽ I
ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

3. Նախազորակոչային տարիքի (16-ից մինչև 18 տարեկան) քաղաքացիների քանակական, որակական բնութագիրը և զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը որոշելու, զինվորական ծառայությանը նրանց նախապատրաստելու, ինչպես նաև պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող և անցկացվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու և ռազմաուսումնական հաստատություններում սովորելու ցանկություն ունեցող քաղաքացիներին հայտնաբերելու և համապատասխան ընտրություն կատարելու նպատակով Զինվորական կոմիսարիատը և Տարածքային զինվորական կոմիսարիատներն իրականացնում են զինվորական հաշվառման աշխատանքներ:

4. Նախազորակոչային և զորակոչային տարիքի զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառման կազմակերպման աշխատանքները պատշաճ նախապատրաստելու և իրականացնելու նպատակով հանրապետական զինվորական կոմիսարը (այսուհետ՝ Զինվորական կոմիսար) ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 5-ը տալիս է հաջորդ տարում 16 տարին լրացող արական սեռի քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքները նախապատրաստելու կարգադրություն, իսկ մինչև հունվարի 20-ը՝ վերոնշյալ հաշվառման աշխատանքները սկսելու վերաբերյալ կարգադրություն:

Այդ կարգադրությունների մեջ նշվում են զինվորական հաշվառման նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ միջոցառումները, դրանց անցկացման ժամանակացույցը, հաշվետվությունների ներկայացման ձևերը և ժամկետները:

5. Տարածքային զինվորական կոմիսարիատները տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող, ինչպես նաև ավագ տարիքի, սակայն սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած արական սեռի քաղաքացիների զինվորական հաշվառումն իրականացնում են զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակների (ձև 1), այբբենական հաշվառման գրքերի (ձև 2) և անձնական գործերի միջոցով: Զինվորական հաշվառումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

6. Զինվորական կոմիսարիատը Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և օտարերկրյա պետությունում

հյուպատոսական հաշվառման վերցված քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող և օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող, սակայն դեռ հյուպատոսական հաշվառման չկանգնած քաղաքացիների զինվորական հաշվառումն իրականացնում է Զինվորական կոմիսարիատում հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակի (ձև 1) և Զինվորական կոմիսարիատում հաշվառված քաղաքացիների ամփոփացուցակի (ձև 1.1) միջոցով:

7. Զինվորական հաշվառման աշխատանքները նախապատրաստելու վերաբերյալ Զինվորական կոմիսարի կարգադրությունը ստանալուց հետո Տարածքային զինվորական կոմիսարիատներում քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքների պատշաճ նախապատրաստման և անցկացման համար տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1) մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը կազմվում են հաջորդ տարում 16 տարին լրացող և զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների անվանացուցակները Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնող տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների և բնակչության պետական ռեգիստր վարող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանումների ցանկը (ձև 3)՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ն անվանացուցակներն ստանալու գործընթացի նկատմամբ հսկողություն սահմանելու համար,

2) ստացված անվացուցակները (համաձայն ձև 5, հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 08-ի N 1269-Ն որոշմամբ) համեմատվում են միմյանց հետ, կատարվում են անհրաժեշտ ճշգրտումները, ճշտվում է ՀՀ քաղաքացի հանդիսանալու հանգամանքը, և դրանց հիման վրա ոչ ոչ, քան մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը կազմվում են զինվորական հաշվառման ենթակա ՀՀ քաղաքացիների ամփոփացուցակները՝ ձև N 5 անվանացուցակներում կատարելով գրառում ամփոփացուցակում ընդգրկված լինելու վերաբերյալ՝ նշելով ամփոփացուցակում յուրաքանչյուր քաղաքացու հերթական համարը:

Ամփոփացուցակում գրառվում է զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, ուսումնական հաստատությունը, ձև N 5-ն ուղարկող մարմինը, Տարածքային զինվորական կոմիսարիատում հաշվառման վերցվելու օրը, ամիսը և տարին (եթե հաշվառված է այլ Տարածքային զինվորական կոմիսարիատում՝ հաշվառման վերցված լինելու վերաբերյալ ստացված գրության մուտքագրման համարը, օրը ամիսը, տարին և գործի համարն ու էջը որտեղ կարված է նշված գրությունը) և այբբենական հաշվառման գրքում գրանցման համարը:

Ամփոփացուցակում ընդգրկվում են բացառապես Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձինք: Ամփոփացուցակում ընդգրկված անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հետագայում դադարեցվելու դեպքում ամփոփացուցակում գրառվում է զինապարտ չհանդիսանալու հիմքը: Զինվորական հաշվառման ենթակա, սակայն սահմանված ժամկետում հաշվառում չանցածների դեպքում վերջիններիս տվյալները տեղափոխվում են հաջորդ տարվա ամփոփացուցակ, ինչի մասին տվյալ տարվա ամփոփացուցակում կատարվում է գրառում՝ նշելով նոր ամփոփացուցակում հերթական համարը: Ամփոփացուցակը լրացվում է խիստ այբբենական հերթականությամբ, մուտքագրվում, համարակալվում, հաստատվում է զորակոչի բաժանմունքի պետի և տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ և Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով,

3) մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը համապատասխան պետական կառավարման մարմիններից և կազմակերպություններից պահանջվում են հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիներին վերաբերող հետևյալ տվյալները՝

ա. հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկասեռավարակաբանության, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին,

բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում հաշվառված լինելու մասին,

գ. բժշկասոցիալական փորձաքննության մարմիններից՝ հաշմանդամություն ունենալու մասին:

Ստացած տվյալները համեմատվում են ամփոփացուցակներում առկա տվյալների հետ, ցուցակներից արվում են անհրաժեշտ քաղվածքներ՝ դրանք կցելով նախազորակոչիկների փաստաթղթերին:

8. Զինվորական կոմիսարիատում զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակը կազմվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության կողմից ստացված տեղեկատվության հիման վրա:

9. Զինվորական հաշվառման աշխատանքները սկսելու վերաբերյալ Զինվորական կոմիսարի կարգադրությունը ստանալուց հետո Տարածքային զինվորական կոմիսարիատներում քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքների պատշաճ կատարումն ապահովելու համար տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1) կազմվում են հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ ըստ օրերի քաղաքացիների ներկայանալու անվանացուցակ և մինչև

հունվարի 25-ը այն ներկայացնում են հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններին,

2) կազմակերպվում են զինվորական հաշվառման նպատակով քաղաքացիներին Տարածքային զինվորական կոմիսարիատ, ինչպես նաև հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ ներկայանալու ժամկետների վերաբերյալ ծանուցում (ձև 4) ոչ ուշ, քան մինչև ներկայանալու օրվան նախորդող 5-րդ օրը:

10. Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիները պարտավոր են ծանուցման մեջ նշված օրը ներկայանալ հաշվառման վայրի Տարածքային զինվորական կոմիսարիատ՝ իրենց հետ ունենալով ծննդյան վկայականի և/կամ անձնագրի պատճենները, ինքնակենսագրություն, սովորելու վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք՝ կրթական ծրագրի և ուսումնառության ժամկետների մասին նշումով, բնութագիր՝ տրված ուսումնական հաստատության կողմից, ընտանիքի կազմի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ ընտանիքի անդամների տվյալների (անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին և հարազատության աստիճանը) և բնակության (հաշվառման) վայրի մասին նշումով, 3x4 չափի 4 գունավոր լուսանկար, առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթեր (եթե առկա են):

Առանձին դեպքերում զինվորական հաշվառման ենթակա անձը կարող է զինվորական հաշվառման վերցվել առանց Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայանալու, եթե նա, գտնվելով մշտական բնակության վայրում, տառապում է ծանր հիվանդությամբ և զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից կամ նրան տեղափոխումը հակացուցված է և վերջինիս բժշկական փորձաքննությունը ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշմամբ սահմանված կարգով իրավասու բժշկական հանձնաժողովի կողմից իրականացվել է առանց իր ներկայության՝ ներկայացված բժշկական փաստաթղթերի հիման վրա:

11. Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիներին ծանուցագրում նշված վայր ներկայանալիս դիմավորում են Տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ նշանակված պատասխանատուները, ովքեր պարզաբանում են նրանց պարտականությունները, ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը, որից հետո Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պաշտոնատար անձանց կողմից յուրաքանչյուր քաղաքացու համար լրացվում է զորակոչիկի քարտ (ձև 5), ուսումնասիրման թերթիկ (ձև 6) և քաղաքացու կողմից ներկայացված փաստաթղթերի հետ միասին կազմվում է անձնական գործ:

Ուսումնասիրման թերթիկը լրացվում է զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների անձնական տվյալների ուսումնասիրության հիման վրա, որն էլ իրականացվում է.

1) զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ անմիջական գրույցի միջոցով,

2) զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների վերաբերյալ առկա փաստաթղթերն ուսումնասիրելու միջոցով,

3) անհրաժեշտության դեպքում այլ իրավասու մարմիններ հարցումներ կատարելու միջոցով:

Անձնական տվյալների ուսումնասիրության ընթացքում ճշտված տեղեկատվությունը լրացվում է ուսումնասիրման թերթիկում, որը հաստատվում է ուսումնասիրություն անցկացնող պաշտոնատար անձի ստորագրությամբ՝ նշելով ուսումնասիրություն կատարողի պաշտոնը, անունը, ազգանունը, ինչպես նաև ուսումնասիրությունը կատարելու օրը, ամիսը, տարին:

Զինվորական հաշվառման ներկայացած քաղաքացիները հաշվառման են վերցվում միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում, որի բացակայության պարագայում Տարածքային զինվորական կոմիսարիատը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանման միջոցով ճշտում է անձի քաղաքացիությունը: Այդ նպատակով Տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից անձնագրային և վիզաների վարչություն են ներկայացված անձի ծննդյան վկայականի, օտարերկրյա պետության քաղաքացիություն կամ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ունենալու, անձի ծնողների (ծնողի) օտարերկրյա պետության քաղաքացիություն կամ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ունենալու, այդ կարգավիճակի ձեռքբերման սկզբնաժամկետը հաստատող օտարերկրյա պետության կամ Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կամ այդ հանգամանքը հաստատող այլ փաստաթղթի պատճենները, ինչպես նաև անձնագրային և վիզաների վարչությունից ըստ անհրաժեշտության պահանջված այլ փաստաթղթերը:

Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակում ընդգրկված անձի՝ ՀՀ քաղաքացի չհանդիսանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանման կողմից տեղեկատվություն ստանալու դեպքում վերջինս հանվում է հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակից և այդ մասին ամփոփացուցակում կատարվում է համապատասխան գրառում՝ սույն հրահանգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում սահմանված ձևով:

Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակում ընդգրկված այն անձինք, որոնց ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ պարզաբանում տալու համար համաձայն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության

ծառայության անձնագրային և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված տեղեկատվության անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ՝ հանվում են զինվորական հաշվառման ենթակա, սակայն սահմանված ժամկետում հաշվառման չկանգնած քաղաքացիների ամփոփացուցակից, ընդգրկվում են առանձին ամփոփացուցակում և նրանց քաղաքացիությունը ճշտելու ուղղությամբ պարբերաբար իրականացվում են համապատասխան աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և տվյալներ:

Անձնական գործը կազմելուց հետո քաղաքացու կամ նրա լիազոր անձի կողմից Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացված բոլոր փաստաթղթերն ընդունվում են դիմումով, մուտքագրվում են, կարվում են զորակոչիկի անձնական գործում և համարակալվում են:

Նույն կարգով են պահպանվում նաև այլ գերատեսչություններից կամ կազմակերպություններից ստացված քաղաքացու վերաբերյալ փաստաթղթերը:

12. Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետը պարտավոր է անձամբ հսկել զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ներկայանալը և միջոցներ ձեռնարկել նրանց չներկայանալու պատճառների բացահայտման ուղղությամբ:

Հարգելի պատճառներով Տարածքային զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած քաղաքացիների համար նշանակվում է ներկայացման մեկ ուրիշ օր:

Անհարգելի պատճառներով Տարածքային զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած քաղաքացիների տվյալները 3 աշխատանքային օրվա ընթացքում հաղորդվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին՝ նրանց հայտնաբերելու և համապատասխան Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու հարցում աջակցության համար:

13. Զինվորական հաշվառման վերցվելու ժամանակ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունն իրականացվում է իրավասու բժշկական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով:

14. Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների առողջական վիճակի բժշկական փորձաքննության աշխատանքներն արձանագրվում են Տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի աշխատանքների արձանագրությունների մատյանում (ձև 7, լրացվում է

Տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի քարտուղարի կողմից), որտեղ գրառվում են նախազորակոչիկի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, առողջական վիճակի վերաբերյալ գանգատները, ախտորոշումը և զինվորական ծառայության համար նրա պիտանիության մասին եզրակացությունը: Յուրաքանչյուր օրվա աշխատանքները ամփոփվում են մեկ արձանագրությամբ, կատարվում են գրառումներ տվյալ օրվա ընթացքում բժշկական փորձաքննության ենթարկված քաղաքացիների թվաքանակի մասին՝ տարանջատելով զինվորական հաշվառման նպատակով, զորակոչի ենթակա և պահեստազորում հաշվառված փորձաքննվող քաղաքացիների թվաքանակները և հաստատվում են իրավասու բժշկական հանձնաժողովի անդամների ստորագրությամբ: Մատյանը կարվում, համարակալվում և հաստատվում է տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ և Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով: Մատյանը վարվում է տվյալ տարվա համար, փակվում է տարվա վերջին աշխատանքային օրը և պահպանվում է սահմանված ժամկետով:

Եթե բժշկական հանձնաժողովի կողմից տրվել է եզրակացություն քաղաքացուն առողջական վիճակի հետազոտության ուղեգրելու մասին, և վերջինիս պիտանիության վերաբերյալ եզրակացությունը կայացվել է հետազոտությունն ավարտելուց հետո՝ այլ արձանագրությամբ, ապա նրան հետազոտության ուղեգրելու արձանագրության մեջ մատյանի համապատասխան սյունակում կատարվում է գրառում՝ նշելով պիտանիության վերաբերյալ վերջնական եզրակացություն տալու արձանագրության համարը, օրը, ամիսը և տարին:

Բժշկական հանձնաժողովի կողմից իրականացված բժշկական փորձաքննության արդյունքների վերաբերյալ Տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկի կողմից գրառում է կատարվում նաև քաղաքացու անձնական գործում առկա զորակոչիկի քարտի <Ձինվորական հաշվառման արդյունքները> բաժնում՝ նշելով արձանագրության համարը, օրը, ամիսը, տարին և պիտանիության վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը: Բժշկական հանձնաժողովի անդամները քաղաքացու պիտանիության վերաբերյալ իրենց կողմից տրված եզրակացության մասին զորակոչիկի քարտի համապատասխան տողում կատարում են գրառում և այն հաստատում ստորագրությամբ:

Եթե բժշկական հանձնաժողովի կողմից տրվել է եզրակացություն քաղաքացուն առողջական վիճակի հետազոտության ուղեգրելու մասին և վերջինիս պիտանիության վերաբերյալ եզրակացությունը կայացվել է հետազոտությունն ավարտելուց հետո՝ այլ արձանագրությամբ, ապա զորակոչիկի քարտի <Ձինվորական հաշվառման արդյունքները> բաժնի 2-րդ սյունակում գրանցվում են առողջական հետազոտման ուղեգրելու, իսկ 3-րդ սյունակում՝ հետազոտումն ավարտելուց հետո պիտանիության վերաբերյալ տրված եզրակացության փորձաքննությունների արդյունքները:

15. Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի աշխատակիցներն անձնական գործում առկա տվյալների ուսումնասիրման, նախազորակոչիկների հետ անձնական զրույցի արդյունքներով և զինվորական ծառայության համար պիտանիության վերաբերյալ տրված եզրակացության հիման վրա ի հայտ են բերում այն նախազորակոչիկներին, ովքեր՝

1) <Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին> ՀՀ օրենքի պահանջների համաձայն կարող են ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից կամ օգտվել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից՝ այդ մասին կատարելով նշում նախազորակոչիկի անձնական գործում,

2) իրենց առողջական վիճակով և ստացած կրթությամբ կարող են մասնակցել պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող և անցկացվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին կամ սովորել ռազմաուսումնական հաստատություններում՝ այդ մասին կատարելով նշում նախազորակոչիկի անձնական գործում:

16. Տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի արձանագրությունների մատյանի գրառումների և նախազորակոչիկների անձնական գործերի հիման վրա Տարածքային զինվորական կոմիսարիատում յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից լրացվում է այբբենական հաշվառման գիրքը:

Այբբենական հաշվառման գրքում պարտադիր գրանցվում են զինվորական հաշվառման վերցված բոլոր նախազորակոչիկների տվյալները՝ նշելով ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը և ամիսը, բնակության վայրի հաշվառման հասցեն, զինվորական հաշվառման վերցվելու օրը, ամիսը և տարին:

Այբբենական հաշվառման գիրքը վարվում է ըստ զորակոչիկների ծննդյան տարեթվերի, յուրաքանչյուր տառի համար գրքում առանձնացվում են համապատասխան էջեր և քաղաքացու տվյալները գրառվում են իր ազգանվան առաջին տառի համար գրքում առանձնացված էջում՝ զինվորական հաշվառման վերցվելու օրը: Այբբենական հաշվառման գիրքը կարվում, համարակալվում, հաստատվում է տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ և Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով, պահպանվում է սահմանված ժամկետով:

17. Այբբենական հաշվառման գրքում գրառումներ են կատարվում նաև.

1) պարտադիր (այլընտրանքային) զինվորական ծառայության քաղաքացու զորակոչվելու կամ այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկվելու մասին՝ նշելով զորակոչվելու (ուղարկվելու) օրը, ամիսը, տարին և զորամասի պայմանական համարը (այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը),

2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին՝ նշելով տարկետում տալու հիմքը, տրման օրը, ամիսը, տարին և ժամկետը,

3) պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու մասին՝ նշելով ազատման հիմքը, օրը, ամիսը և տարին,

4) զինվորական հաշվառումից հանելու կամ հաշվառումը տեղափոխելու մասին՝ նշելով հաշվառումից հանելու կամ հաշվառումը տեղափոխելու հիմքը, օրը, ամիսը, տարին և Տարածքային զինվորական կոմիսարիատը,

5) ռազմաուսումնական հաստատություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ուսումնական հաստատություն ընդունվելու մասին՝ նշելով ուսումնական հաստատությունը, ընդունվելու մասին հրամանի համարը, օրը, ամիսը և տարին:

18. Այբբենական հաշվառման գրքում գրառումները կատարվում են գրիչով, հայերեն լեզվով, ընթեռնելի ձեռագրով:

19. Քաղաքացու տվյալներն այբբենական հաշվառման գրքում գրանցելուց հետո նա համարվում է զինվորական հաշվառման վերցված և նրան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է նախազորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ (*համաձայն ձև N 1, հաստատված ՀՀ կառավարության 2018թ. նոյեմբերի 08-ի N 1269-Ն որոշմամբ*)՝ այդ մասին կատարելով գրառում զինվորական հաշվառման գրքույկների տրման ամփոփագրում (**ձև 8**), որը կազմվում և լրացվում է Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքում, յուրաքանչյուր ամսվա համար առանձին և հաստատվում է Տարածքային զինվորական կոմիսարի կողմից:

Նախազորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկում գրառվում են քաղաքացու տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը տարին), զինվորական հաշվառման վերցնելու օրը, ամիսը, տարին, համապատասխան տեղում փակցվում է քաղաքացու լուսանկարը՝ հաստատելով տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ և Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով: Գրառումները կատարվում են գրիչով, հայերեն լեզվով, ընթեռնելի ձեռագրով:

Նախազորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկը կորցնելու դեպքում քաղաքացու դիմումի հիման վրա նրան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է նոր գրքույկ՝ այդ մասին գրառում կատարելով նրա անձնական գործում առկա զորակոչիկի քարտի համապատասխան կետում:

20. Զինվորական կոմիսարիատում զինվորական հաշվառման վերցված քաղաքացիների ամփոփացուցակը կազմվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության կողմից ստացված տեղեկատվության կամ քաղաքացու կողմից Զինվորական կոմիսարիատ ներկայացված դիմումի հիման վրա: Վերը նշված տեղեկատվության հետ միասին Զինվորական կոմիսարիատ է ներկայացվում նաև հաշվառման ենթակա անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի

հանդիսանալու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, դիմումը՝ հասցեագրված Զինվորական կոմիսարին, ինչպես նաև սույն հրահանգի 12-րդ կետում նշված փաստաթղթերը:

Ամփոփացուցակում գրառվում է զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, բնակության վայրի հաշվառման հասցեն, Զինվորական կոմիսարիատում հաշվառման վերցվելու օրը, ամիսը, տարին, զորակոչը, զորակոչի օրը, ամիսը, տարին և զորամասի համարը, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրված տարկետման հիմքը և ժամկետը, տարկետման տրման օրը, ամիսը, տարին, պարտադիր զինվորական ծառայությունից ազատման օրը, ամիսը, տարին և հիմքը, հաշվառումը Տարածքային զինվորական կոմիսարիատ տեղափոխելու օրը, ամիսը, տարին, ելքի համարը և Տարածքային զինվորական կոմիսարիատը, զորակոչից խուսափելու համար հարուցված քրեական գործի (նախաձեռնված քրեական վարույթի) համարը, հարուցման օրը, ամիսը և տարին:

Ամփոփացուցակի վարումն իրականացվում է Զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձի կողմից՝ էլեկտրոնային կամ թղթային եղանակով:

Զինվորական կոմիսարիատում հաշվառված քաղաքացիների բժշկական փորձաքննության և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի աշխատանքները Զինվորական կոմիսարի կարգադրությամբ կազմակերպում է համապատասխան Տարածքային զինվորական կոմիսարիատը:

21. Առանձին դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում նախազորակոչային, ինչպես նաև զորակոչային տարիքի քաղաքացու անձնագրի վավերականությունը սահմանել ավելի երկար ժամկետով, քան նախատեսված է օրենքով, քաղաքացու կամ նրա կողմից լիազորված անձի դիմումը և ներկայացված փաստաթղթերի պատճենները քաղաքացու զինվորական հաշվառման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը Զինվորական կոմիսարի կողմից համապատասխան առաջարկությամբ զեկուցվում է պաշտպանության նախարարին:

«Վ պաշտպանության նախարարի կողմից դրական որոշում կայացնելու դեպքում քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին Զինվորական կոմիսարիատի կամ Տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրվում է տեղեկանք՝ (ձև 20) անձնագրի վավերականությունը նշված ժամկետով սահմանելու հարցում առարկություն չունենալու մասին:

Անհրաժեշտության դեպքում հաշվառված քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրվում է նաև Տարածքային զինվորական կոմիսարիատում կամ Զինվորական կոմիսարիատում քաղաքացու հաշվառված լինելու, ինչպես նաև բժշկական փորձաքննության արդյունքներով զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիության մասին համապատասխան տեղեկանք (ձև 20.1 և ձև 20.2):

22. Զինվորական հաշվառման աշխատանքներն ավարտելուց հետո՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսին Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետի կողմից համեմատվում են ամփոփացուցակների և այբբենական հաշվառման գրքերի գրառումները նախազորակոչիկների անձնական գործերի և նրանցում առկա տվյալների հետ՝ անճշտությունների և թերությունների հայտնաբերման ու վերացման նպատակով:

23. Զինվորական հաշվառման չներկայացած քաղաքացիների հայտնաբերման ուղղությամբ Տարածքային զինվորական կոմիսարիատը տեղական ինքնակառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնում է որոնողական աշխատանքներ, որի շրջանակներում յուրաքանչյուր տարվա ընթացքում երկու անգամ, բայց ոչ ուշ, քան մինչև հունիսի 30-ը և դեկտեմբերի 30-ը, տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից կազմում է զինվորական հաշվառման չներկայացած, ինչպես նաև ավագ տարիքի, սահմանված ժամկետում հաշվառման չներկայացած բոլոր քաղաքացիները անվանացուցակները և ուղարկում է տեղական ինքնակառավարման մարմիններին և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին՝ նրանց կողմից վերջիններիս հայտնաբերման և Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու հարցում աջակցության համար:

Տեղական ինքնակառավարման մարմիններ և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ ուղարկված զինվորական հաշվառման չներկայացած քաղաքացիների անվանացուցակները, ստացված պատասխան գրությունները, ինչպես նաև հաշվառման չներկայացած քաղաքացիների վերաբերյալ բոլոր գրագրությունները և փաստաթղթերը կարվում են առանձին գործում:

Որոնողական աշխատանքներն իրականացվում են ամեն տարի, անընդհատ՝ մինչև քաղաքացու 27 տարին լրանալը:

24. Յուրաքանչյուր տարվա ընթացքում իրականացված զինվորական հաշվառման աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները (ձև 9 և ձև 9.1) բոլոր Տարածքային զինվորական կոմիսարիատները սահմանված ժամկետներում ներկայացնում են Զինվորական կոմիսարիատ:

Զինվորական կոմիսարիատում զորակոչի վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվում և ամփոփվում են Տարածքային զինվորական կոմիսարիատներից ստացված քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները, կատարվում է վերլուծություն և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ այդ աշխատանքներում տեղ գտած թերությունները և բացթողումները վերացնելու համար՝ այդ նպատակով

Տարածքային զինվորական կոմիսարիատներին տալով անհրաժեշտ կարգադրություններ:

25. Տարածքային զինվորական կոմիսարիատներում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից իրականացվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և օտարերկրյա պետությունների ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար մասնագիտական ընտրության աշխատանքներ, որի շրջանակներում.

1) մասնագիտական կողմնորոշման նպատակով նախազորակոչային տարիքի քաղաքացիների շրջանում կազմակերպվում են քարոզչական աշխատանքներ՝ համագործակցելով սպասարկման տարածքում գործող ուսումնական հաստատությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

2) կազմակերպվում են ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու վերաբերյալ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների ընդունման և նրանց անձնական գործերի կազմման աշխատանքները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի պահանջների,

3) կազմակերպվում են ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության մանդատային հանձնաժողով ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար դիմած քաղաքացիների դիմումների և անձնական գործերի ներկայացման աշխատանքները:

26. Տարածքային զինվորական կոմիսարիատներում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից իրականացվում են պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու համար քաղաքացիների ընտրության և ուղեգրման աշխատանքներ, որի շրջանակներում.

1) կազմակերպվում են պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու ցանկություն ունեցող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչին ենթակա քաղաքացիների ընտրության և նրանց դիմումների (ծև 10) ընդունելու աշխատանքները՝ պարտադիր զինվորական ծառայության իրենց զորակոչից վեց ամիս առաջ՝ յուրաքանչյուր տարվա մայիս-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին,

2) ներկայացված դիմումների հիման վրա իրականացվում են դասընթացներին ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց հաշվառում, կատարվում է համապատասխան ուսումնասիրություն և սահմանված կարգով կազմակերպվում են նրանց բժշկական զննության և փորձաքննության աշխատանքները,

3) բժշկական զննության և փորձաքննության արդյունքներով զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման հավելված 2-ի աղյուսակի 6-րդ (արգելվում է վարել տրանսպորտային միջոց) և 8-րդ (ծառայություն օրվա հեշտացված կարգացուցակով) սյունակներում նշված հողվածներով սահմանափակում ունեցողների) ճանաչված քաղաքացիներն ընդգրկվում են պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող կրթական ծրագրերին մասնակցելու համար ընտրված անձանց անվանացուցակում (ծև 11), իսկ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար պիտանի չճանաչված կամ վերը նշված հողվածներով սահմանափակում ունեցող քաղաքացիների դիմումները մերժվում են՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացուն գրավոր տեղեկացնելով դիմումը մերժելու պատճառների մասին,

4) կազմված անվանացուցակները ոչ ուշ, քան մինչև դասընթացները սկսելուն նախորդող 5-րդ օրը Տարածքային զինվորական կոմիսարիատների կողմից ուղարկվում են համապատասխան ուսումնական հաստատություն, իսկ ուսումնական հաստատություններից ստանալով դասընթացները սկսելու և ավարտելու օրվա վերաբերյալ տեղեկատվությունը՝ ապահովվում է ընտրված քաղաքացիների ներկայությունը դասընթացների սկսման օրը համապատասխան ուսումնական հաստատությունում և դասընթացների ընդգրկված քաղաքացիների անվանացուցակները ներկայացվում են Զինվորական կոմիսարիատ:

27. Սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած զորակոչային տարիքի քաղաքացիների զինվորական հաշվառումն իրականացվում է սույն հրահանգի պահանջների համաձայն՝ զինվորական հաշվառման կանոնները խախտելու փաստով տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից վարչական վարույթ իրականացնելուց և քաղաքացուն վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելուց հետո:

Զինվորական հաշվառման վերցվելուց հետո քաղաքացին ներգրավվում է հայտարարված, իսկ զորակոչն ավարտված լինելու դեպքում՝ հաջորդող զորակոչի միջոցառումներին:

Տարածքային զինվորական կոմիսարիատներում վարչական վարույթներ են իրականացվում նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների իրավասու պաշտոնատար անձանց կողմից զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները, ինչպես նաև նրանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալները Տարածքային զինվորական կոմիսարիատ ժամանակին և սահմանված ձևով չներկայացնելու դեպքերում:

Վերը նշված դեպքերում Տարածքային զինվորական կոմիսարիատներում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության

օրենսգրքի պահանջների համաձայն հարուցվում է վարչական վարույթ, կազմվում է արձանագրություն (ձև 22) և իրականացված վարչական վարույթի արդյունքում տարածքային զինվորական կոմիսարի կողմից կայացվում է զինվորական հաշվառման բնագավառում վաչական իրավախախտման գործով որոշում (ձև 23)՝ այդ մասին սահմանված կարգով տեղեկացնելով զինվորական հաշվառման կանոնները խախտած զինապարտին կամ անհրաժեշտ տվյալները Տարածքային զինվորական կոմիսարիատ ժամանակին և սահմանված ձևով չներկայացրած իրավասու պաշտոնատար անձին:

Իրականացված վարչական վարույթների նյութերը Տարածքային զինվորական կոմիսարիատներում կարվում են առանձին թղթապանակում և պահպանվում են սահմանված ժամկետներով:

28. Սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած և զորակոչային տարիքը լրացած քաղաքացու զինվորական հաշվառման վերցնելու գործընթացը Տարածքային զինվորական կոմիսարիատներում իրականացվում են քաղաքացու կամ լիազորված անձի կողմից զինվորական հաշվառման վերցվելու մասին դիմում ներկայացնելու դեպքում: Դիմումին կից ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, քաղաքացու բնակության վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ բնակության (հաշվառման) վայրի մասին նշումով, սովորելու վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք՝ ուսումնառության ժամկետների մասին նշումով: Եթե հաշվառման ենթակա քաղաքացին բնակվել է արտերկրում, ապա վերը նշված տեղեկանքները ներկայացվում են մինչև արտերկիր նրա մեկնելը Հայաստանի Հանրապետությունում նրա բնակվելու և սովորելու ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվում են արտերկրում նրա բնակվելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր (արտերկրում նրա հաշվառման, բնակվելու կամ ուսման վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ):

Տվյալ դեպքերում անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու համար բավարար կարող է համարվել նախկինում ստացած ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանումների կողմից տրված տեղեկանքը կամ եզրակացությունը, կամ անձնագրային գործողությունների վերաբերյալ դիմումը կամ անձնական հաշվառման քարտը՝ լրացված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանումների կողմից:

Տարածքային զինվորական կոմիսարիատում քաղաքացու կամ լիազորված անձի կողմից ներկայացված դիմումն ընդունվելուց հետո հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության

ուստիկանության ինֆորմացիոն կենտրոն՝ քաղաքացու դատվածության և քրեական հետապնդման մեջ գտնվելու և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով փաստաթղթավորված լինելու վերաբերյալ: Ստացված պատասխան գրությունները, եթե փաստաթղթավորվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով՝ նաև հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները, քաղաքացու դիմումը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև նրա հաշվառման վայրի և ուսումնառության մասին տեղեկանքները, Տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից նրա նկատմամբ իրականացված որոնողական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները (առկա այլ փաստաթղթեր) զեկուցագրով ներկայացվում են Զինվորական կոմիսարիատ՝ քաղաքացու հաշվառման վերաբերյալ համապատասխան եզրակացություն տալու համար:

Զինվորական կոմիսարիատում զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը, ստուգվում է դրանց լրիվությունն ու ամբողջականությունը, անհրաժեշտության դեպքում հարցը քննարկվում է նաև այլ լիազոր մարմինների հետ և տրվում է եզրակացություն՝ ՀՀ զինված ուժերի պահեստազորում քաղաքացու հաշվառման ենթակա լինելու վերաբերյալ:

Վերը նշված եզրակացությունը Տարածքային զինվորական կոմիսարիատում ստացվելուց հետո Տարածքային զինվորական կոմիսարիատ քաղաքացու ներկայանալու դեպքում վերջինս երեք աշխատանքային օրվա ընթացքում տարածքային զինվորական կոմիսարի որոշմամբ հաշվառվում է պահեստազորում: Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու դեպքում քաղաքացին պահեստազորում հաշվառվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ II

ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Զորակոչային տարիքի (18-ից 27 տարեկան) քաղաքացիների քանակական և որակական բնութագիրը որոշելու և զորակոչային ռեսուրսների արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով Զինվորական կոմիսարիատում և Տարածքային զինվորական կոմիսարիատներում իրականացվում են զինվորական հաշվառման աշխատանքներ:

30. Տարածքային զինվորական կոմիսարիատներում զորակոչային տարիքի քաղաքացիների զինվորական հաշվառումն իրականացվում է այբբենական հաշվառման գրքերի և անձնական գործերի, իսկ Ջինվորական կոմիսարիատում՝ հաշվառված քաղաքացիների ամփոփացուցակի և անձնական գործերի միջոցով:

31. Տարածքային զինվորական կոմիսարիատներում զորակոչիկների անձնական գործերը պահվում են քարտադարանում, դասավորվում են այբբենական կարգով՝ բաժանվելով հետևյալ կատեգորիաների.

- 1) հերթական զորակոչին 18 տարին լրացողներ,
- 2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետում ստացածներ,
- 3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստացածներ,
- 4) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստացածներ,
- 5) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից այլ հիմքերով տարկետում ստացածներ,
- 6) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափածներ,
- 7) ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժ կրողներ, քրեական հետապնդման մեջ գտնվողներ,
- 8) սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած քաղաքացիներից հերթական զորակոչի ավարտից հետո զինվորական հաշվառման վերցված զորակոչային տարիքի քաղաքացիներ,
- 9) զինվորական հաշվառման այլ կարգավիճակ ունեցող զորակոչային տարիքի քաղաքացիներ:

Տարածքային զինվորական կոմիսարի հրամանով քարտադարանում անձնական գործերի պահպանման համար նշանակվում է պատասխանատու անձ, ով պատասխանատվություն է կրում քարտադարանի ճիշտ վարման համար:

32. Ջինվորական կոմիսարիատում և Տարածքային զինվորական կոմիսարիատներում զինվորական հաշվառման վերցված քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության զորակոչը կազմակերպվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշման պահանջների համաձայն:

33. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման շրջանակներում քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ իրավասու բժշկական հանձնաժողովի կողմից, իսկ քաղաքացիների բժշկական հետազոտության ուղեգրման, ինչպես նաև կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացման աշխատանքներն իրականացվում է Տարածքային զինվորական կոմիսարի կողմից՝ իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Տարածքային զինվորական կոմիսարիատներում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից նախօրոք կազմվում է իրավասու բժշկական հանձնաժողով ներկայացվող քաղաքացիների անվանացուցակը՝ Ջինվորական կոմիսարի կողմից սահմանվող ձևաչափով, որից հետո փորձաքննության ենթակա քաղաքացիները կազմված անվանացուցակով և անձնական գործերով ներկայացվում են բժշկական փորձաքննության: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից քաղաքացու պիտանիության վերաբերյալ տրված եզրակացությունը մուտքագրվում, կարվում է զորակոչիկի անձնական գործում և համարակալվում է:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի բժշկական փորձաքննության աշխատանքներն արձանագրվում են Տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի աշխատանքների արձանագրությունների մատյանում՝ սույն հրահանգի 14-րդ կետում սահմանված ձևով:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումներում ծառայության նշանակվելու համար անցկացվող մրցույթներին մասնակցող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին, դիմելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է համապատասխան տեղեկանք **(ձև 20.3)**:

34. Քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին Տարածքային զինվորական կոմիսարի կողմից համապատասխան որոշում կայացնելուց, ինչպես նաև քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ որոշումը կամ հրամանը ստանալուց հետո Տարածքային զինվորական կոմիսարիատում երեք աշխատանքային օրվա ընթացքում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից այն գրանցվում է զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյանում և կատարվում է համապատասխան գրառում զորակոչիկների այբբենական հաշվառման գրքում՝ սույն հրահանգի 16-րդ կետում սահմանված ձևով:

35. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացուն զորակոչվելու օրը Տարածքային զինվորական կոմիսարիատում հատկացվում է զինվորական գրքույկ (համաձայն ձև N 3, հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. նոյեմբերի 08-ի N 1269-Ն որոշմամբ)՝ այդ մասին տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից կատարելով գրառում պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիներին զինվորական գրքույկների տրման ամփոփագրում **(ձև 8.1)**:

Տարածքային զինվորական կոմիսարիատում քաղաքացու տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը տարին) գրառվում է

զինվորական գրքույկում, համապատասխան տեղում փակցվում է քաղաքացու լուսանկարը՝ այն հաստատելով Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով և տարածաքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ:

Տարածքային զինվորական կոմիսարիատում լրացվում են զինվորական գրքույկի 1-ից մինչև 6-րդ, իսկ պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացու ազատվելու դեպքում՝ նաև 7-րդ կետերը ներառյալ: Գրառումները կատարվում են գրիչով, հայերեն լեզվով, ընթեռնելի ձեռագրով: 6-րդ և 7-րդ կետերում կատարված գրառումները հաստատվում են Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով և տարածաքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ:

Հանրապետական հավաքակայանում գործող դասակարգման խմբի և ուսումնառության հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են հավաքակայան ներկայացված քաղաքացիների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշման 31-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների առկայությունը, ինչպես նաև նրանց առողջական վիճակը:

Հավաքակայան ներկայացված քաղաքացու ընտանեկան պայմանների, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում դասակարգման խմբի կամ ուսումնառության հանձնաժողովի կողմից լրացվում է քաղաքացուն հանրապետական հավաքակայանից Տարածքային զինվորական կոմիսարիատ վերադարձնելու վերաբերյալ թերթիկը (ծև 21), որտեղ նշվում է քաղաքացուն Տարածքային զինվորական կոմիսարիատ վերադարձնելու նպատակահարմարության վերաբերյալ դասակարգման խմբի կամ ուսումնառության հանձնաժողովի եզրակացությունը, անհրաժեշտ ուսումնասիրություն կամ առողջական վիճակի հետզոտություն կամ ուսումնառության փորձաքննություն իրականացնելու հիմնավորումները և այն ներկայացվում է հանրապետական հավաքակայանում Ձինվորական կոմիսարիատի աշխատանքները համակարգողին:

Քաղաքացուն հանրապետական հավաքակայանից Տարածքային զինվորական կոմիսարիատ վերադարձնելու նպատակահարմարության վերաբերյալ դասակարգման խմբի կամ ուսումնառության հանձնաժողովի եզրակացության հիման վրա հանրապետական հավաքակայանում Ձինվորական կոմիսարիատի աշխատանքները համակարգողի կողմից կայացվում է համապատասխան որոշում և քաղաքացին վերադարձվում է Տարածքային զինվորական կոմիսարիատ:

Քաղաքացուն հանրապետական հավաքակայանից Տարածքային զինվորական կոմիսարիատ վերադարձնելու վերաբերյալ թերթիկը Տարածքային զինվորական կոմիսարիատում մուտքագրվում է, կարվում է զորակոչիկի անձնական գործում և համարակալվում է: Տարածքային զինվորական

կոմիսարիատում կազմակերպում են տվյալ քաղաքացու ընտանեկան պայմանների ուսումնասիրման կամ առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության անհրաժեշտ աշխատանքները, որի արդյունքում զինվորական ծառայության համար պիտանի ճանաչվելու և զորակոչից տարկետման կամ զինվորական ծառայությունից ազատման՝ օրենքով սահմանված իրավունք չունենալու դեպքում քաղաքացին կրկին զորակոչվում է և ներկայացվում հանրապետական հավաքակայան՝ այդ մասին հանրապետական հավաքակայանից տարածքային ստորաբաժանում վերադարձնելու վերաբերյալ թերթիկում կատարելով համապատասխան գրառում և հաստատելով այն Տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ և Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողին զինվորական գրքույկ հատկացնելու վերաբերյալ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբից համապատասխան կարգադրություն, իսկ կրկնօրինակ զինգրքույկը լրացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության կամ զինծառայողի լուսանկարի բացակայության դեպքում դրանք քաղաքացու զորակոչն իրականացրած Տարածքային զինվորական կոմիսարիատից կամ զորամասից ստանալուց հետո Տարածքային զինվորական կոմիսարիատում երկու աշխատանքային օրվա ընթացքում վերը նշված կարգով լրացվում է զինվորական գրքույկի կրկնօրինակ և փոստային առաքման միջոցով ուղարկում է համապատասխան զորամաս, կամ հանձնում է զորամասի հրամանատարի կողմից լիազորված անձին՝ այդ մասին կատարելով գրառում զինվորական հաշվառման գրքույկների տրման ամփոփագրում:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին, դիմելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է պարտադիր զինվորական ծառայության վերջինիս զորակոչված լինելու վերաբերյալ տեղեկանք (ձև 20.4)՝ նշելով զորակոչման օրը, ամիսը և տարին:

36. Տարածքային զինվորական կոմիսարիատներում իրականացվում են պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների ընդունման և դրանց հետագա ընթացքը կազմակերպելու աշխատանքներ, որի շրջանակներում.

1) Տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվում է քաղաքացու կողմից ներկայացված դիմումը, պարզվում է դիմումի ներկայացման՝ <Այլընտրանքային ծառայության մասին> ՀՀ օրենքով սահմանված ժամկետի պահպանման հարցը և եթե դիմումը ներկայացվել է այդ ժամկետի խախտմամբ, ապա Տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը գրանցելու պահից 5 օրվա ընթացքում այն վերադարձնում է դիմումատուին: Տարածքային զինվորական կոմիսարիատը կարող է հարգելի համարել դիմումը ներկայացնելու

ժամկետը բաց թողնելը, եթե այն բաց է թողնվել դիմումատուից անկախ պատճառներով:

Եթե դիմումը չի համապատասխանում <Այլընտրանքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներին, ապա այն 5 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին՝ նշելով դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները: Դիմումը վերադարձվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դիմումատուն իրավունք ունի վերացնելու դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները և այն կրկին ներկայացնելու Տարածքային զինվորական կոմիսարիատ: Սույն կետում նշված կարգով դիմումը վերադարձնելու կամ դիմումը կրկին չներկայացվելու, ինչպես նաև այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի եզրակացությամբ դիմումը մերժվելու դեպքերում քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի,

2) Տարածքային զինվորական կոմիսարիատում դիմումը գրանցելու պահից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան զորակոչի ավարտին նախորդող 25-րդ օրը, պարզվում է օրենքով սահմանված կարգով դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայությունը և դրանց բացակայության դեպքում ներկայացված դիմումը և դիմումատուի անձնական գործն սահմանված կարգով ուղարկվում է այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողով:

Դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայության դեպքում դիմումն այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողով չի ներկայացվում, և այն Տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվելու պահից 30 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին, որից հետո հայտարարված զորակոչի ժամանակ օրենքով սահմանված կարգով ձևակերպվում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը,

3) քաղաքացուն այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին համապատասխան իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա Տարածքային զինվորական կոմիսարիատում զորակոչիկին հանձնվում է ծանուցագիր՝ այլընտրանքային ծառայության մեկնելու համար Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայողին կազմակերպության հաստիքացուցակում ընդգրկելու վերաբերյալ տեղեկատվությունը Տարածքային զինվորական կոմիսարիատ ստացվելուց հետո այլընտրանքային աշխատանքային ծառայության քաղաքացու ուղարկված լինելու վերաբերյալ

այբբենական հաշվառման գրքում կատարվում է համապատասխան գրառում՝ սույն հրահանգի 16-րդ կետում սահմանված ձևով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին, դիմելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ըթացքում տրվում է այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված լինելու մասին տեղեկանք (ձև 20.5)՝ նշելով ուղարկման օրը, ամիսը և տարին:

37. Հայտարարված զորակոչի ավարտից հետո Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքում կազմվում է պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայության զորակոչված (ուղարկված) քաղաքացիների անվանացուցակ (ձև 12), որը հաստատվում է տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ և Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով: Անվանացուցակում նշվում են քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, բնակության վայրի հասցեն և հեռախոսը, զորակոչվելու օրը, ամիսը, տարին և զորամասի պայմանական համարը (այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը): Անվանացուցակի մեկ օրինակը փոխանցվում է Տարածքային զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժանմունք՝ զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից արձակվելուց հետո քաղաքացիների զինվորական հաշվառման ներկայանալու գործընթացը վերահսկելու նպատակով:

38. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների անձնական գործերը մինչև զինվորական ծառայությունից նրանց արձակվելը և պահեստազորում հաշվառվելը պահվում են Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքում, որից հետո փոխանցվում են Տարածքային զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժանմունք՝ սահմանված կարգով և ժամկետներով պահպանման համար:

39. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները ՀՀ զինված ուժերի պահեստազորում հաշվառվում են տարածքային զինվորական կոմիսարի որոշմամբ (ձև 13)՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հիմքով:

Պահեստազորում հաշվառված քաղաքացիների անձնական գործերը Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքից զորահավաքային բաժանմունք փոխանցելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն (ձև 14), որում նշվում է պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ ՀՀ զինված ուժերից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, քաղաքացուն պահեստազորում հաշվառելու մասին Տարածքային զինվորական կոմիսարի որոշման համարը, օրը, ամիսը, տարին և փոխանցվող անձնական գործերում թերթերի քանակը: Արձանագրությունը ստորագրվում է զորակոչի և զորահավաքային

բաժանմունքների պետերի կողմից, մուտքագրվում է և պահվում է զորակոչի բաժանմունքում:

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ ՀՀ զինված ուժերից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիների անձնական գործերը պահվում են զորահավաքային բաժանմունքում՝ սահմանված կարգով և ժամկետներով:

Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված, ինչպես նաև ՀՀ զինված ուժերից առողջական վիճակի պատճառով կամ ընտանեկան պայմաններից ելնելով վաղաժամկետ արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները օրենքով սահմանված կարգով իրականացված բժշկական փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելու, իսկ ընտանեկան պայմաններից ելնելով զինված ուժերից վաղաժամկետ արձակվածները՝ զինվորական ծառայությունից արձակվելու համար հիմք հանդիսացած հանգամանքները վերանալու դեպքում (եթե նրանց չճառայած ժամկետը գերազանցում է 6 ամիսը) տեղափոխվում են հաշվառման Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունք, նրանց տվյալները գրանցվում են այբբենական հաշվառման գրքում և վերջիններս ներգրավվում են հայտարարված զորակոչին՝ զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայության չճառայած ժամկետը շարունակելու ուղարկման համար:

40. Չորակոչային տարիքի քաղաքացիների վերաբերյալ օրենքով սահմանված որոշումներ կայացնելու, ինչպես նաև յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում նախկինում տրված տարկետումների կամ քաղաքացուն զորակոչի չկանչելու համար հիմք հանդիսացող տվյալների, փաստաթղթերի հավաքագրման և ստացման գործընթացի նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով Տարածքային զինվորական կոմիսարիատներում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից իրականացվում է նաև քաղաքացիների հաշվառում (կարող է իրականացվել նաև էլեկտրոնային եղանակով)՝ ըստ զինվորական հաշվառման կարգավիճակի, որի շրջանակներում.

1) վարվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետում ստացած քաղաքացիների հաշվառման մատյան (ձև 15), որտեղ նշվում է քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, տարկետման հիմքը (օրենքը, հոդվածը, մասը և կետը, որով տրվել է տարկետումը) և ուսումնական հաստատությունը, տարկետում տալու հրամանի կամ որոշման համարը, օրը, ամիսը, տարին, տարկետման ժամկետը և զորակոչը, որին ենթակա է քաղաքացին ուսումն ավարտելուց հետո, ուսումնառության վերաբերյալ ներկայացված տեղեկանքի մուտքագրման համարը, օրը, ամիսը և տարին:

Քաղաքացու ուսումնառության վերաբերյալ ներկայացված տեղեկանքը մուտքագրվում է Տարածքային զինվորական կոմիսարիատում և կարվում է նրա անձնական գործում:

Տարածքային ստորաբաժանումում կազմակերպվում է ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո բժշկական կամ ռազմաբժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու պարտավորություն ունեցող քաղաքացիների ռազմաբժշկական փորձաքննության ներկայացման աշխատանքները:

Նպատակային ուսումնառության համար տրամադրված տարկետման ընթացքում տարկետման իրավունքը կորցրած, կամ իր դիմումի համաձայն տարկետման իրավունքից հրաժարված և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնած քաղաքացին զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության առաջիկա հայտարարված զորակոչի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշման պահանջների համաձայն,

2) վարվում է առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև մեկ տարի ժամանակով տարկետում ստացած քաղաքացիների հաշվառման մատյան (ձև 16), որտեղ նշվում է քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, տարկետում տալու հրամանի համարը, օրը, ամիսը, տարին, հիվանդության ախտորոշումը և հոդվածը, տարկետման ժամկետը և զորակոչը, որին ենթակա է քաղաքացին, բուժման ուղեգրվելու օրը, ամիսը, տարին, բժշկական հաստատությունը, բուժում ստանալու վերաբերյալ փաստաթղթի մուտքագրման համարը, օրը, ամիսը, տարին, բուժումից հետո տրված ախտորոշումը կամ եզրակացությունը,

3) վարվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստացած քաղաքացիների հաշվառման մատյան (ձև 17), որտեղ նշվում է քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, տարկետման հիմքը (օրենքը, հոդվածը, մասը և կետը, որով տրվել է տարկետումը), տարկետում տալու հրամանի համարը, օրը, ամիսը, տարին, տարկետման ժամկետը և զորակոչը, որին ենթակա է քաղաքացին, տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերի յուրաքանչյուր զորակոչի ընթացքում ներկայացման, օրը ամիսը, տարին և մուտքագրման համարը:

Քաղաքացին պարտավոր է ստացած տարկետումից հետո յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը մուտքագրվում են Տարածքային զինվորական կոմիսարիատում և կարվում են նրա անձնական գործում: Սահմանված ժամկետում նշված փաստաթղթերը

Տարածքային զինվորական կոմիսարիատ չներկայացնելու դեպքում քաղաքացին համարվում է տարկետման իրավունքը կորցրած և ենթակա է զորակոչի:

Ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած քաղաքացին համարվում է ստացած տարկետման իրավունքը կորցրած նաև նրա մոտ տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները վերանալու դեպքում:

Ընտանեկան պայմաններից ելնելով տրամադրված տարկետման ընթացքում տարկետման իրավունքը կորցրած, կամ իր դիմումի համաձայն տարկետման իրավունքից հրաժարված և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնած քաղաքացին զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր հիմունքներով:

Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցնում ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում է պահեստագրում՝ Տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ,

4) վարվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից այլ հիմքերով տարկետում ստացած քաղաքացիների հաշվառման մատյան (ձև 18), որտեղ նշվում է քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, տարկետման հիմքը (օրենքը, հոդվածը, մասը և կետը, որով տրվել է տարկետումը), տարկետում տալու որոշման համարը, օրը, ամիսը, տարին, տարկետման ժամկետը և զորակոչը, որին ենթակա է քաղաքացին, տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերի յուրաքանչյուր զորակոչի ընթացքում (անհրաժեշտության դեպքում) ներկայացման, օրը ամիսը, տարին և մուտքագրման համարը:

Քաղաքացու տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող ներկայացված փաստաթղթերը մուտքագրվում են Տարածքային զինվորական կոմիսարիատում և կարվում են նրա անձնական գործում:

Հայաստանի Հանապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն և 2023 թվականի մայիսի 23-ի N 383-Ն որոշումների պահանջների համաձայն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 30-ը քաղաքացին կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացրած ստորաբաժանում են ներկայացնում համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ:

Հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը վերը նշված կարգով և սահմանված ժամկետում համապատասխան Տարածքային զինվորական կոմիսարիատ չներկայացվելու կամ ուսումնառությունը դադարեցվելու դեպքերում Տարածքային զինվորական կոմիսարիատը 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկատվություն է ուղարկում

Հայաստանի Հանապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ քաղաքացուն տրված տարկետումը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանապետության կառավարություն ներկայացնելու համար, որի ընդունումից հետո քաղաքացին կորցնում է տարկետման իրավունքը և հայտարարված զորակոչի ընթացքում սահմանված կարգով ներգրավվում է զորակոչային միջոցառումներին,

5) վարվում է ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժ կրող և քրեական հետապնդման մեջ գտնվող քաղաքացիների հաշվառման մատյան (ձև 19), որտեղ նշվում է քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, ազատազրկման դատապարտվելու կամ կալանքի կամ քրեական հետապնդման վերցվելու օրը, ամիսը, տարին, ազատազրկման ժամկետը, վճիռ կայացրած կամ վարույթ իրականացնող մարմինը, ազատազրկման վայրից ազատ արձակման, կամ քրեական հետապնդումը վերացնելու վերաբերյալ փաստաթղթի մուտքագրման համարը, օրը, ամիսը և տարին:

Ազատազրկման ձևով պատիժ կրող և զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների հաշվառումն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի գտնվելու վայրի Տարածքային զինվորական կոմիսարիատը, իսկ արտերկրում պատիժ կրող քաղաքացիների զինվորական հաշվառումը՝ Ջինվորական կոմիսարիատը:

Նշված կարգավիճակ ունեցող քաղաքացիների անձնական գործերը քարտադարանում պահվում են առանձին, այբբենական հաշվառման գրքերում կատարվում է գրառում նրանց ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժ կրելու կամ քրեական հետապնդման մեջ գտնվելու վերաբերյալ և վերջիններս ընդգրկվում են զորակոչի միջոցառումներին ազատազրկման վայրից կամ կալանքից ազատ արձակվելու կամ նրանց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելու վերաբերյալ Տարածքային զինվորական կոմիսարիատ համապատասխան տեղեկատվություն ստացվելուց հետո՝ հայտարարված զորակոչի ընթացքում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

41. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած քաղաքացուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ (համաձայն ձև N 2, հաստատված ՀՀ կառավարության 2018թ. նոյեմբերի 08-ի N 1269-Ն որոշմամբ)՝ այդ մասին կատարելով գրառում զինվորական հաշվառման գրքույկների տրման ամփոփագրում:

Զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկում գրառվում են քաղաքացու տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը տարին), զինվորական հաշվառման վերցնելու օրը, ամիսը, տարին,

համապատասխան տեղում փակցվում է քաղաքացու լուսանկարը, կատարվում են նշումներ նաև տրված տարկետման հիմքի և ժամկետի վերաբերյալ՝ հաստատելով Տարածքային զինվորական կոմիսարիատի կնիքով և տարածքային զինվորական կոմիսարի ստորագրությամբ: Գրառումները կատարվում են գրիչով, հայերեն լեզվով, ընթեռնելի ձեռագրով:

Ձորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկը կորցնելու դեպքում քաղաքացու դիմումի հիման վրա նրան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է նոր գրքույկ՝ այդ մասին գրառում կատարելով նրա անձնական գործում:

Անհրաժեշտության դեպքում հաշվառված քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրվում է նաև Տարածքային զինվորական կոմիսարիատում կամ Զինվորական կոմիսարիատում քաղաքացու հաշվառված լինելու և պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման մեջ գտնվելու մասին համապատասխան տեղեկանք (ձև 20.6)՝ նշելով տարկետման հիմքը և ժամկետը:

42. Տարածքային զինվորական կոմիսարիատներում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից իրականացվում են պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատազրկման դատապարտված քաղաքացիների հաշվառման և նրանց հետագա ծառայության ուղարկելու աշխատանքներ, որի շրջանակներում,

1) պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատազրկման դատապարտվելու և զորամասի անձնակազմի ցուցակներից զինծառայողի հանվելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ստանալուց հետո վերջինս հաշվառվում է Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքում, այբբենական հաշվառման գրքում կատարվում գրառում ազատազրկման վայրում պատիժ կրելու՝ դատարանի վճռով նշանակված ժամկետի վերաբերյալ և սահմանվում է հսկողություն ազատազրկման վայրում պատժի կրումից ազատվելուց հետո նրան հայտարարված զորակոչին ներգրավելու գործընթացի վրա,

2) ազատազրկման վայրում պատժի կրումից ազատվելուց հետո <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա չլինելու դեպքում վերջինս սահմանված կարգով հաշվառվում է ՀՀ զինված ուժերի պահեստազորում՝ համաձայն <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջների:

Նշված դեպքում քաղաքացու փաստաթղթերը (զինվորական գրքույկը, դատավճռի և պատժի կրումից ազատվելու (այդ թվում նաև՝ պայմանական վաղաժամկետ) վերաբերյալ տեղեկանքի պատճենները) Տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից համապատասխան զեկուցագրով

ներկայացվում են Ջինվորական կոմիսարիատ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով վերջինիս ՀՀ զինված ուժերից արձակման հարցի հետագա ընթացքը կազմակերպելու համար:

Ջինվորական կոմիսարիատում ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը և ուղարկվում են ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի համապատասխան ստորաբաժանում՝ ՀՀ զինված ուժերից քաղաքացուն վաղաժամկետ արձակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի նախագիծ կազմելու և հարցը պաշտպանության նախարարին զեկուցելու համար,

3) ազատագրկման վայրում պատիժ կրած և պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու համար զորակոչվելու ենթակա անձանց բժշկական փորձաքննությունը կազմակերպվում է Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 404-Ն և N 405-Ն որոշումների պահանջների համաձայն:

Բժշկական փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության համար պիտանի, կամ սահմանափակումով պիտանի ճանաչված և «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունքից չօգտվող քաղաքացին հայտարարված զորակոչի ընթացքում զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու՝ անձնական գործով և զինհաշվառման փաստաթղթերով ներկայացվելով հանրապետական հավաքակայան: Զորակոչվող քաղաքացու զինհաշվառման փաստաթղթերին կցվում են նաև դատավճռի և պատժի կրումից ազատվելու վերաբերյալ տեղեկանքի պատճենները:

Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ զինվորական ծառայության համար ոչ պիտանի կամ բուժման կարիք ունեցող ճանաչված քաղաքացուն իրականացված հետազոտության արդյունքներով և համապատասխան փաստաթղթերով (զինվորական գրքույկը, դատավճռի և պատժի կրումից ազատվելու (այդ թվում նաև՝ պայմանական վաղաժամկետ) վերաբերյալ տեղեկանքի պատճենները) Տարածքային զինվորական կոմիսարիատը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի փորձաքննությանը:

Կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի կողմից զինվորական ծառայության համար քաղաքացու ոչ պիտանի ճանաչվելու վերաբերյալ եզրակացություն տալու դեպքում նրա փաստաթղթերը (զինվորական գրքույկը, կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի եզրակացության պատճենը, դատավճռի և պատժի կրումից ազատվելու (այդ

թվում նաև՝ պայմանական վաղաժամկետ) վերաբերյալ տեղեկանքի պատճենները) Կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի կողմից ուղարկվում են ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի համապատասխան ստորաբաժանում՝ ՀՀ զինված ուժերից քաղաքացուն վաղաժամկետ արձակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի նախագիծ կազմելու և հարցը պաշտպանության նախարարին զեկուցելու համար,

4) բժշկական փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության համար պիտանի, կամ սահմանափակումով պիտանի ճանաչված, սակայն <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունքից օգտվող քաղաքացու փաստաթղթերը (զինվորական գրքույկը, պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու վերաբերյալ Տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված եզրակացությունը՝ հիմք հանդիսացող փաստաթղթերի հաստատված պատճեններով, դատավճռի և պատժի կրումից ազատվելու (այդ թվում նաև՝ պայմանական վաղաժամկետ) վերաբերյալ տեղեկանքի պատճենները) մանրամասն զեկուցագրով ներկայացվում են Զինվորական կոմիսարիատ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով վերջինիս ՀՀ զինված ուժերից արձակման հարցի հետագա ընթացքը կազմակերպելու համար:

Զինվորական կոմիսարիատում ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը և ուղարկվում են ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի համապատասխան ստորաբաժանում՝ ՀՀ զինված ուժերից քաղաքացուն վաղաժամկետ արձակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի նախագիծ կազմելու և հարցը պաշտպանության նախարարին զեկուցելու համար:

Սույն կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված դեպքերում քաղաքացին ՀՀ զինված ուժերի պահեստազորում հաշվառվում է ՀՀ զինված ուժերից նրան արձակված համարելու մասին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համապատասխան հրամանը Տարածքային զինվորական կոմիսարիատ ստացվելուց հետո:

ԳԼՈՒԽ III

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

43. Նախագորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիները զինվորական հաշվառումից հանվում են <Պաշտպանության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ, հոդվածի 7-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 08-ի N 1269-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից տրված տեղեկատվության հիման վրա:

Քաղաքացուն զինվորական հաշվառումից հանելու մասին տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից այբբենական հաշվառման գրքում կատարվում է համապատասխան գրառում՝ սույն հրահանգի 16-րդ կետով սահմանված ձևով, իսկ հաշվառումից հանված քաղաքացուց երեք աշխատանքային օրվա ընթացքում վերցվում է նրան տրված նախագորակոչային կամ զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկը և տրամադրվում է համապատասխան տեղեկանք՝ նշելով զինվորական հաշվառումից հանելու ժամկետը և հիմքը:

44. Բնակության վայրի հաշվառումը փոխելու դեպքում նախագորակոչային կամ զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառումը տեղափոխվում է նոր բնակության վայրի սպասարկումն իրականացնող Տարածքային զինվորական կոմիսարիատ, իսկ Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և/կամ օտարերկրյա պետությունում հյուպատոսական հաշվառման կանգնած քաղաքացու զինվորական հաշվառումը՝ Զինվորական կոմիսարիատ:

45. Նշված դեպքերում քաղաքացուն Տարածքային զինվորական կոմիսարիատում զինվորական հաշվառման վերցնելու համար հիմք է հանդիսանում տարածքային զինվորական կոմիսարին հասցեագրված նրա դիմումը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից տրված տեղեկանքը՝ նոր բնակության վայրում հաշվառվելու վերաբերյալ և զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթի (նախագորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ կամ զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ) պատճենը, իսկ Զինվորական կոմիսարիատում օտարերկրյա պետությունում քաղաքացու հյուպատոսական հաշվառման կանգնած լինելու վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ստացված տեղեկատվությունը և համապատասխան փաստաթղթերը, կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունենալու և օտարերկրյա պետությունում մշտապես բնակվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված համապատասխան գրությունը և փաստաթղթերը:

46. Զինվորական հաշվառումը տեղափոխելու վերաբերյալ քաղաքացու դիմումը Տարածքային զինվորական կոմիսարիատում մուտքագրվում է, ուսումնասիրվում են դիմումին կից ներկայացված փաստաթղթերը և համապատասխան հիմքերի առկայության դեպքում քաղաքացին վերցվում է զինվորական հաշվառման:

Զինվորական հաշվառման վերցված քաղաքացու տվյալները տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից գրանցվում են այբբենական հաշվառման գրքում՝ սույն հրահանգի 16-րդ կետով սահմանված ձևով և նրա զինվորական հաշվառման գրքույկում զինվորական հաշվառման վերցված լինելու վերաբերյալ երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է համապատասխան գրառում:

47. Քաղաքացու զինվորական հաշվառումը տեղափոխելու մասին Տարածքային զինվորական կոմիսարիատը համապատասխան գրությամբ հայտնում է քաղաքացու նախկին զինվորական հաշվառման վայրի Տարածքային զինվորական կոմիսարիատ՝ պահանջելով նաև վերջինիս վերաբերյալ կազմված անձնական գործը: Անձնական գործը ստանալուց հետո այն պահվում է քարտադարանում՝ ըստ քաղաքացու ունեցած զինվորական հաշվառման կարգավիճակի:

48. Օտարերկրյա պետությունում քաղաքացու հյուպատոսական հաշվառման կանգնած լինելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ստացված տեղեկատվությունը և համապատասխան փաստաթղթերը Զինվորական կոմիսարիատում մուտքագրվում են, ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը և համապատասխան հիմքերի առկայության դեպքում քաղաքացին վերցվում է զինվորական հաշվառման՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով տեղեկացնելով քաղաքացուն:

Զինվորական հաշվառման վերցված քաղաքացու տվյալները զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից գրանցվում են ամփոփացուցակում՝ սույն հրահանգի 18-րդ կետով սահմանված ձևով և քաղաքացու զինվորական հաշվառումը Զինվորական կոմիսարիատ տեղափոխելու մասին համապատասխան գրությամբ հայտնում է քաղաքացու նախկին զինվորական հաշվառման վայրի Տարածքային զինվորական կոմիսարիատ:

49. Քաղաքացու զինվորական հաշվառումը տեղափոխելու վերաբերյալ համապատասխան գրություն ստանալուց հետո Տարածքային զինվորական կոմիսարիատը նրա անձնական գործն երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է քաղաքացու հաշվառումն իրականացնող Տարածքային զինվորական կոմիսարիատ՝ այդ մասին այբբենական հաշվառման գրքում կատարելով գրառում՝ սույն հրահանգի 16-րդ կետով սահմանված ձևով:

50. Զինվորական հաշվառումից հանելու կամ զինվորական հաշվառումը տեղափոխելու վերաբերյալ քաղաքացու անձնական գործում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից կատարվում է համապատասխան գրառում, իսկ քաղաքացիներին զինվորական հաշվառումից հանելու և նրանց զինվորական հաշվառումը տեղափոխելու վերաբերյալ գրագրություններն ու հիմք հանդիսացած փաստաթղթերը կարվում են առանձին թղթապանակում և պահպանվում են սահմանված ժամկետով:

51. Ռազմաուսումնական հաստատություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ուսումնական հաստատություն ընդունված քաղաքացու մասին տվյալները համապատասխանաբար փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանում և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն՝ զինվորական հաշվառումն իրականացնելու համար՝ այդ մասին այբբենական հաշվառման գրքում տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ պատասխանատու նշանակված անձանց կողմից կատարելով գրառում՝ սույն հրահանգի 16-րդ կետով սահմանված ձևով:


Ռազմաուսումնական հաստատություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ուսումնական հաստատություններ ընդունված զինծառայողներին զինվորական գրքույկ և այլ զինհաշվառման փաստաթղթեր հատկացվում են համապատասխան Տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից՝ Զինվորական կոմիսարի կարգադրությամբ:

ԱՄՓՈՓԱՑՈՒՑԱԿ

20 _____ Տարածքային զինվորական կոմիսարիատում
 թվականի ընթացքում զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների

Հ/Հ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Քաղաքացու տվյալներն ուղարկող մարմինը	Զինվորական հաշվառման վերցնելու օրը ամիսը, տարին	Այբենական հաշվառման գրքում գրանցման համարը	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8	9	10

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ



(կոչում)

(ստորագրություն)

(անուն, հայրանուն, ազգանուն)

< > _____ 20 թ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ԱՏԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

(ստորագրություն)

(անուն, հայրանուն, ազգանուն)

< > _____ 20 թ.

Պահպանման ժամկետը՝ _____ տարի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

_____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

**20 թ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Գ Ի Ր Ք

Սկսված է՝ <__> _____ 20 թ.

Ավարտված է՝ <__> _____ 20 թ.

<< Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ >

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Ձև 3

(կոչում) (ստորագրություն) (անուն, ազգանուն)
< > _____ 20 թ.

ՑԱՆԿ

Տարածքային զինվորական կոմիսարիատում զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների անվանացուցակները ներկայացնող տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների և բնակչության պետական ռեգիստր վարող << ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանումների

<<	Ձև N 5 անվանացուցակը ներկայացնող կազմակերպության անվանումը	Կազմակերպության հասցեն և հեռախոսահամարը	Անվանացուցակի ստացման օրը, ամիսը, տարին, մուտքագրման համարը	Գործի համարն ու էջը, որտեղ կարված է անվանացուցակը	Նշումներ
1	2	3	4	5	6

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

(ստորագրություն) (անուն, հայրանուն, ազգանուն)

< > _____ 20 թ.

Քաղաքացի _____

Հասցեն _____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ


Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և <Պաշտպանության մասին> օրենքի Դուք ենթակա եք զինվորական հաշվառման:

Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին անձը հաստատող

(ամիս) (օր)

փաստաթղթով ներկայանալ _____ Տարածքային զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝ _____

զինվորական հաշվառման վերցվելու համար:



_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ (կոչում)

_____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)

Կտրման գիծ

ՍՏԱՑԱԿԱՆ

< > _____ 20 թվականին զինվորական հաշվառման վերցվելու համար

_____ Տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայանալու

ծանուցագիրը ստացա:

(անուն, հայրանուն, ազգանուն)


_____ (ստորագրություն)

< > _____ 20 թ.

Ծանոթություն՝

Տարածքային զինվորական կոմիսարիատ չներկայանալու և զինվորական հաշվառման վերցվելուց խուսափելու դեպքում Դուք կենթարկվեք օրենքով սահմանված պատասխանատվության:

Ըստ այբբենական հաշվառման գրքի



Ջ Ո Ր Ա Կ Ո Չ Ի Կ Ի Ք Ա Ր Տ

(ազգանունը, անունը, հայրանունը)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ծննդյան տարեթիվը, ամիսը, օրը		
2. Ծննդավայրը		
3. Ազգությունը		
4. Բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարը (էլ. փոստի հասցեն)		
5. Աշխատանքի (ուսման) վայրը		
6. Հանրային ծառայությունների համարանիշը		
7. Կրթությունը	ա) միջնակարգ	
	բ) մասնագիտական	
	գ) բարձրագույն	
8. Մասնագիտությունը		
9. Օտար լեզուների իմացությունը		
10. Դատվածությունը (երբ, ինչի համար և պատժաչափը)		
11. Նշումներ պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու մասին		

II. ԶՈՐԱԿՈՉԻԿԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
1. ՀԱՄԱՏԵՂ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ընտանիքի անդամները	Անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդ. թիվը	Ծննդավայրը և հասցեն	Աշխատունակությունը

2. ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ընտանիքի անդամները	Անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդ. թիվը	Ծննդավայրը և հասցեն	Աշխատունակությունը

III. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արյան խումբ _____ R գործոն _____

ա) հասակը _____ սմ, բ) քաշը _____ կգ.

	< > _____ 20 թ. Արձանագրություն _____	< > _____ 20 թ. Արձանագրություն _____
1. Թերապևտ		
2. Սրտաբան		
3. Վիրաբույժ		
4. Վնասվածքաբան		
5. Նյարդաբան		
6. Հոգեբույժ		
7. Ակնաբույժ		
8. Օտոլարինգոլոգ		
9. Մաշկավեներաբան		
Եզրակացություն (լրացվում է Տարածքային գինվորական կոմիսարիատի բժշկի կողմից)		

IV. ԶՈՐԱԿՈՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

	< ___ > _____ 20 թ. Արձանագրություն _____	< ___ > _____ 20 թ. Արձանագրություն _____	< ___ > _____ 20 թ. Արձանագրություն _____
ա) Հասակը			
բ) Քաշը			
գ) Կրծքավանդակի չափը			
դ) Բժիշկների եզրակացությունը			
1. Թերապևտ			
2. Սրտաբան			
3. Վիրաբույժ			
4. Վնասվածքաբան			
5. Նյարդաբան			
6. Հոգեբույժ			
7. Ակնաբույժ			
8. Օտոլարինգոլոգ			
9. Մաշկավեներաբան			
Զորակոչիկի վերաբերյալ կայացված եզրակացությունները (լրացվում է Տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկի կողմից)			
ե) պիտանի է զինվորական ծառայության համար			
զ) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար			
է) բուժման համար կարիք ունի տարկետման մինչև մեկ տարի, ներկայացնել ԿԲՀ			
ը) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար, ներկայացնել ԿԲՀ			
թ) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար, ներկայացնել ԿԲՀ			

Վ. ՆՇՈՒՄՆԵՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվառվել է <____> _____ 20 թ.

Հաշվառումը տեղափոխվել է _____ Տարածքային գինվորական կոմիսարիատ <____> _____ 20 թ.

Հանվել է հաշվառումից <____> _____ 20 թ., Հիմքը՝ _____

Տրվել է գինվորական հաշվառման գրքույկ <____> _____ 20 թ.

ՎԻ. ՆԵՐԿԱՅԱՅԵԼ Է ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ՝

ԶՈՐԱԿՈՉՄԱՆ ՀԱՄԱՐ <____> _____ 20 թ.

Ուղարկվել է <____> _____ 20 թ. գործառու №² _____

Զորակոչի բաժանմունքի պետ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Քաղաքացի _____

Ծնված 20 թ. _____

(ծննդավայրը)

Հ/Հ	Ում հետ է անցկացվել զրույցը	Օրը, ամիսը, տարեթիվը	Զրույցի համառոտ բովանդակությունը
1	2	3	4

Ուսումնասիրությունը կատարեց՝

_____ (պաշտոնը)

_____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)

1	2	3	4

Ուսումնասիրությունը կատարեց՝

(պաշտոնը)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

**ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 20 թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Մ Ա Տ Յ Ա Ն**

Սկսված է՝ <___> _____ 20 թ.

Ավարտված է՝ <___> _____ 20 թ.

20 թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ _____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
 ԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ 20 թ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ
 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ըստ կիսամյակների ծնվածներ		ԸՆԴԱՄԵՆԸ
		մինչև 30.06	մինչև 31.12	
1	ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ			
Ա	Ենթակա են զինվորական հաշվառման համաձայն Ձև-1 ամփոփագուցակի			
Բ	Հաշվառվել են			
Գ	Չեն հաշվառվել			
2	ՀԱՇՎԱՌՎԱԾՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ			
Ա	Ըստ առողջական վիճակի			
1)	Պիտանի են զինվորական ծառայության համար			
2)	Պիտանի են զինվորական ծառայության համար սահմանափակումով			
3)	Կարիք ունեն բուժման			
4)	Ժամանակավորապես պիտանի չեն զինվորական ծառայության համար			
5)	Պիտանի չեն զինվորական ծառայության համար			
6)	Գտնվում են առողջական վիճակի հետազոտման մեջ			
Բ	Ըստ ազգությունների			
1)	Հայ			
2)	Այլ ազգություն ունեցող			

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ (կոչում)

_____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ
 ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ը/Ը	Ծննդյան տարին	Ենթակա են հաշվառման	Հաշվառված են	Հաշվառված չեն
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
ԸՆԴԱՄԵՆԸ				

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ (կոչում)

_____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)

< _____ > _____ 20 _____ թ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ - ին
(կոչում) (անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

Հայտնում եմ Ձեզ, որ <Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կազմակերպվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու նպատակով ցանկություն ունեմ ընդգրկվելու _____ մասնագիտությամբ պատրաստման դասընթացներին:

Կից ներկայացնում եմ անձը հաստատող և հիմնական կրթություն ստացած լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճենները:

Դիմող՝ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

< _____ > _____ 20 թ.

< Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ >

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

Ձև 11

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

< > _____ 20 թ.

ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

Պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպության ուսումնական հաստատություններում կազմակերպվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրին ընդգրկվող քաղաքացիների

Ը/Ը	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Հեռախոսահամարը	Կրթությունը	Նշումներ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

< > _____ 20 թ.

<< Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ >

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

Ձև 12

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

< > 20 թ.

ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

20 թ. _____ զորակոչի ընթացքում պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայության զորակոչված (ուղարկված) քաղաքացիների

Ը/Ը	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Բնակության վայրի հաշվառման հասցեն և հեռախոսահամարը	Զորակոչվելու օրը, ամիսը, տարին	Զորամասի համարը	Նշումներ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

< > 20 թ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

< > 20 թվականի N

ՔԱՂԱՔԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՇՏՏԱԶՈՐՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ որոշում եմ.

1. ՀՀ զինված ուժերի պահեստազորում հաշվառել <Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին> 56-րդ հոդվածի 2-րդ մասի կետի հիմքով պահեստազորում հաշվառման ենթակա քաղաքացի (ծննդյան օրը, ամիսը)

տարին, անունը, ազգանունը, հայրանունը) -ին:

2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում տալ քաղաքացի

(անունը, ազգանունը, հայրանունը) -ին (օրինական ներկայացուցչին):

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

< > 20 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պահեստագրում հաշվառված քաղաքացիների անձնական գործերը _____ Տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքից զորահավաքային բաժանմունք փոխանցելու վերաբերյալ:

<Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին> ՀՀ օրենքի պահանջների համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ ՀՀ զինված ուժերից արձակված ներքոհիշյալ քաղաքացիների անձնական գործերը փոխանցվում են զորահավաքային բաժանմունք՝ հետագա պահպանումը սահմանված կարգով և ժամկետներով իրականացնելու համար:

Հ/Հ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Տարածքային զինվորական կոմիսարի որոշման համարը օրը, ամիսը, տարին	Անձնական գործում թերթերի քանակը	Նշումներ
1	2	3	4	5	6
1	2	3	4	5	6

Ընդամենը սույն արձանագրությամբ զորահավաքային բաժին փոխանցվեց _____ անձնական գործ:

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

<____> _____ 20 թ.

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԶՈՐԱԿԱՎԱՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

<____> _____ 20 թ.

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև 15



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

_____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

**ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ <__> _____ 20 թ.

Ավարտված է՝ <__> _____ 20 թ.

Հ/Հ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Տարկետման հիմքը և ուսումնական հաստատությունը	Տարկետման հրամանի կամ որոշման համարը օրը, ամիսը, տարին	Տարկետման ժամկետը և գորակոչը
1	2	3	4	5	6

Տարկետման ընթացքում ուսումնառության վերաբերյալ ներկայացված տեղեկանքի մուտքագրման համարը, օրը, ամիսը, տարին	Նշումներ
---	-----------------

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև 16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

_____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

**ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲՈՒԺՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՄԻՆՁև ՄԵԿ ՏԱՐԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ <__> _____ 20 թ.

Ավարտված է՝ <__> _____ 20 թ.

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև 17



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

_____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

**ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ
ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ <__> _____ 20 թ.

Ավարտված է՝ <__> _____ 20 թ.

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև 18



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

_____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

**ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԱՅԼ ՀԻՄՔԵՐՈՎ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ <__> _____ 20 թ.

Ավարտված է՝ <__> _____ 20 թ.

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև 19



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

_____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

**ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԱՄ ԿԱԼԱՆՔԻ ՁևՈՎ ՊԱՏԻԺ ԿՐՈՂ և ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ <__> _____ 20 թ.

Ավարտված է՝ <__> _____ 20 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

**(զինվորական հաշվառման վերցված քաղաքացու անձնագրի վավերականության
ժամկետի մասին)**

Տրվում է _____ -ին,
ծնված 20____ թվականին, այն մասին, որ նա <__> _____ -ի 20____ թվականին
հաշվառվել է _____ Տարածքային զինվորական կոմիսարիատում,
ենթակա է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 20____ թվականի
_____ զորակոչին և նրա անձնագրի վավերականությունը կարող է
սահմանվել մինչև 20 թվականի _____ - ի _____ -ը:

Տրվում է ներկայացնել _____ :

(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

(զինվորական հաշվառման վերցված լինելու մասին)

Տրվում է _____ -ին,
ծնված 20__ թվականին, այն մասին, որ նա <__> _____ -ի 20__ թվականին
հաշվառվել է _____ Տարածքային զինվորական կոմիսարիատում և
ենթակա է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 20__ թվականի
_____ զորակոչին:

Տրվում է ներկայացնել _____ :
(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

(հաշվառման վերցված քաղաքացու զինվորական ծառայության համար պիտանիության մասին)

Տրվում է _____ -ին,
ծնված 20____ թվականին, այն մասին, որ նա <____> _____ -ի 20____ թվականին
հաշվառվել է _____ Տարածքային զինվորական կոմիսարիատում
և իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ
ճանաչվել է _____

(պիտանելիությունը զինվորական ծառայության համար)

համաձայն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N404-Ն որոշմամբ հաստատված
հիվանդությունների ցանկի _____ -րդ հոդվածի _____ կետի:

Տրվում է ներկայացնել _____ :
(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

(հատուկ նշանակության ստորաբաժանումներում ծառայության նշանակվելու համար անցկացվող մրցույթներին մասնակցելու)

Տրվում է _____ -ին,
ծնված 20____ թվականին, այն մասին, որ նա հաշվառված է _____
Տարածքային զինվորական կոմիսարիատում, ենթակա է շարքային կազմի պարտադիր
զինվորական ծառայության 20____ թվականի _____ զորակոչին, իրավասու
բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ ճանաչվել է

_____,
(պիտանելիությունը զինվորական ծառայության համար)

ռազմաուսումնական հաստատությունների դիմորդ չի հանդիսանում, պաշտպանական
բնույթի հասարակական կազմակերպության ուսումնական հաստատություններում
կազմակերպվող զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերին չի
ընդգրկվել:

Տրվում է ներկայացնել _____ :
(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

(պարտադիր զինվորական ծառայության զորակոչված լինելու մասին)

Տրվում է _____ -ին,
ծնված 20____ թվականին, այն մասին, որ նա _____ Տարածքային
զինվորական կոմիսարիատի կողմից <___> _____ -ի 20____ թվականին
զորակոչվել է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության:

Տրվում է ներկայացնել _____ :
(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

(այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված լինելու մասին)

Տրվում է _____ -ին,
ծնված 20____ թվականին, այն մասին, որ նա _____ Տարածքային
զինվորական կոմիսարիատի կողմից <__> _____ -ի 20____ թվականին
ուղարկվել է այլընտրանքային աշխատանքային ծառայության:

Տրվում է ներկայացնել _____ :
(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

(զորակոչային տարիքի քաղաքացու հաշվառված լինելու և տարկետման մեջ գտնվելու մասին)

Տրվում է _____ -ին,
ծնված 20____ թվականին, այն մասին, որ նա հաշվառված է _____
Տարածքային զինվորական կոմիսարիատում և <<Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> << օրենքի _____ -րդ հոդվածի _____ -րդ մասի _____ կետի հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացել է տարկետում մինչև 20____ թվականի _____ զորակոչը:

Տրվում է ներկայացնել _____ :
(տեղեկանքը ներկայացնելու վայրը)

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

(կոչում)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ԹԵՐԹԻԿ

(հանրապետական հավաքակայանից քաղաքացուն Տարածքային զինվորական կոմիսարիատ վերադարձնելու վերաբերյալ)

_____ ծնված 20__թ.
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ (տարածքային զինվորական կոմիսարիատի անվանումը)

_____ (հավաքակայան ներկայացվելու օրը, ամիսը, տարին)

_____ (զինծառայության համար պիտանիության աստիճանը)

Դասկարգման խմբի կամ ՀՀՌԲՀ-ի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները.

_____:

Եզրակացություն _____
_____:

Դասակարգման խմբի պետ կամ ՀՀՌԲՀ նախագահ՝

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

< _____ > _____ 20 թ.

Հավաքակայանում Ձինվորական կոմիսարիատի աշխատանքները համակարգողի որոշումը.


Հիմք ընդունելով _____ -ի 20 _____ թ. -ի _____ -ի
_____ -ի եզրակացությունը՝
որոշում եմ _____ -ին
(անունը, հայրանունը, ազգանունը)

ծնված _____ թվականին, վերադարձնել _____
(ծննդյան օրը, ամիսը, տարին)

Տարածքային զինվորական կոմիսարիատ՝ եզրակացության մեջ նշված ուսումնասիրությունները և/կամ առողջական վիճակի հետազոտության և բժշկական փորձաքննության աշխատանքները կազմակերպելու և զորակոչի հարցը կրկին քննարկելու համար:

_____ (կոչումը) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

< _____ > _____ 20 թ.



Տարածքային զինվորական կոմիսարիատում իրականացված ուսումնասիրությունների, կազմակերպված հետազոտությունների և բժշկական փորձաքննության արդյունքները.


Զորակոչիկի վերաբերյալ կայացված վերջնական որոշումը. _____ :

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ (կոչում)

_____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)



< > _____ 20 թ.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____

« ____ » _____ 20 թ. Վայրը _____

Ես՝ _____ տարածքային զինվորական կոմիսարիատի

արձանագրությունը կազմողի պաշտոնը,

ազգանունը, անունը, հայրանունը,

Կազմեցի սույն արձանագրությունը այն մասին, որ քաղաքացի

ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը

Բնակվող _____

հեռ. _____

Աշխատում է (սովորում է) _____

հեռ. _____

կազմակերպության անվանումը, հասցեն

Խախտել է _____

խախտված իրավանորմը և իրավախախտման էությունը

_____ , որը

նախատեսված է ՀՀ ՎԻՎ օր-ի _____ -րդ հոդվածի _____ -րդ մասով:

Արձանագրությունը կցվում է՝ _____

անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը

վարչական իրավախտումը կատարած անձի քաջատրությունը, դիտողությունը, ստորագրությունը

Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը, խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումը և արձանագրության պատճենը ստացա՝

վարչական իրավախտում կատարած անձի ազգանունը, ստորագրությունը

արձանագրություն կազմողի ստորագրությունը

Քաղվածք ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 255 և 267 հոդվածներից

Խախտողն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ՝ արձանագրության բովանդակության առթիվ, շարադրելու այն ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները:

Իրավունք ունի նաև ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանչի ծառայություններից, եթե չի տիրապետում վարույթի լեզվին, գանգատարկելու գործով որոշումը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է խախտողի բացակայությամբ, եթե գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելուց և գործի քննությունը հետաձգելու մասին նրա կողմից միջնորդություն չստացվելուց հետո նա չի ներկայանում գործի քննությանը:

խախտման քննարկման վայրը և ժամանակը

Նշում գործող խախտումների մասին _____

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Ձինվորական հաշվառման բնագավառում վարչական իրավախախտման գործով ՈՐՈՇՈՒՄ N _____

խախտված իրավանորմը, հաստատված հանգամանքների շարադրանքը

խախտելու համար

ՀՀ ՎԻՎ օրենսգրքի _____ -րդ հոդվածի _____ - րդ մասի համաձայն քաղաքացի _____ -ին

ազգանունը, անունը, հայրանունը

գործի վերաբերյալ ընդունված որոշումը

Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանրապետական զինվորական կոմիսարիին՝ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 283-րդ հոդվածի սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

որոշումն ընդունող անձի պաշտոնը,

« _____ » _____ 20 _____ թ.

ազգանունը, ստորագրությունը

Որոշման պատճենը և կատարման կարգի մասին քաղվածքն ստացա՝

« _____ » _____ 20 _____ թ.

խախտողի ստորագրությունը

կտրման գիծ ----- Կ. Տ.

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Ձինվորական հաշվառման բնագավառում վարչական իրավախախտման գործով ՈՐՈՇՈՒՄ N _____

խախտված իրավանորմը, հաստատված հանգամանքների շարադրանքը

խախտելու համար

ՀՀ ՎԻՎ օրենսգրքի _____ -րդ հոդվածի _____ - րդ մասի համաձայն քաղաքացի _____ -ին

ազգանունը, անունը, հայրանունը

գործի վերաբերյալ ընդունված որոշումը

Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանրապետական զինվորական կոմիսարիին՝ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 283-րդ հոդվածի սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

որոշումն ընդունող անձի պաշտոնը,

« _____ » _____ 20 _____ թ.

ազգանունը, ստորագրությունը

Որոշման կատարման կարգը՝ դարձերեսին:

Տուգանքի վճարման հաշվի համարը՝ _____

Քաղվածք ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 305 հոդվածից

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքը խախտողի կողմից մուծվում է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին:

Քաղվածք ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 305 հոդվածից

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքը խախտողի կողմից մուծվում է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին: